**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**02.03.2026 թ. կնքված N ԱՀԱՀ-ՄԱԾՁԲ-26/2 գնման պայմանագրի**

ք. Երևան «03» «հունիսի» 2026թ.

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Խարազյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եսայանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.03.2026թ. կնքված N ԱՀԱՀ-ՄԱԾՁԲ-26/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.6 կետը և Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամ | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ |
| ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 10 | ք. Երևան, Ազատության 24/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900018010380 | Հ/Հ 163004038861 |
| ՀՎՀՀ 00542809 | ՀՎՀՀ 02500052 |
| Ս. Խարազյան ---------------------------- (ստորագրություն) Կ.Տ. | Հ. Եսայան ---------------------------- (ստորագրություն) Կ.Տ. |